



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌՆԵԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 05/19**

11.02.2019թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը (**այսուհետ՝ Կենտրոն**) քննարկելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» և «ե» կետերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Քաղաքացի Վլադիմիր Մկրտչյանը (ներկայացուցիչ՝ Վարդան Զուռնայան, այսուհետ՝ Դիմող) 2018 թվականի նոյեմբերի 19-ին դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ խնդրելով որոշել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ», «դ», «ե» և «զ» կետերի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

ՀՀ Սահմանադրական դատարանի դատական կազմը սահմանադրական դիմումի ընդունելության հարցով 06.12.2018թ. թիվ ՍԴԿԿՈ-8 որոշմամբ՝ Վլադիմիր Մկրտչյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետի մասով մերժել է, իսկ վիճարկվող օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» և «ե» կետերի մասով ընդունել քննության:

Դիմողի կարծիքով՝ դատարանում քննվող թիվ ՎԴ/3353/05/16 վարչական գործով կիրառման ենթակա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» և «ե» կետերով սահմանված դրույթները չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը:

Դիմողը՝ վերլուծելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» և «ե» կետերով նախատեսված դրույթները հանգել է հետևության, որ դրանք բավարար չափով որոշակի չեն և դրանով հանարավոր չէ որոշել սահմանափակումների հիմքերն ու ծավալը: Մասնավորապես՝ նշված դրույթներով ՀՀ Սահմանադրությամբ սահմանված հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս բավարար չափով սահմանված չեն այն կազմակերպական կառուցակարգերն ու ընթացակարգերը, որոնք անհրաժեշտ են հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար, իսկ այդ իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պիտանի և անհրաժեշտ չեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին

հասնելու համար: Նշված նորմերով նախատեսված սահմանափակումները համարժեք չեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը, ինչպես նաև սահմանված չեն սահմանափակումների հիմքերն ու ծավալը, դրանք բավարար չափով որոշակի չեն, ինչն էլ իր հերթին խոչընդոտում է այդ իրավունքների և ազատությունների կրողների և հասցեատերերի կողմից համապատասխան վարքագծի դրսևորմանը:

Մասնավորապես՝ դիմողը վերլուծելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետը հանգել է հետևության, որ եթե վարչական ակտի հետ կապված օրենքով նախատեսված է որևէ պարտավորություն, որը պետք է կատարեր այդ ակտի հասցեատերը, սակայն չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել, ապա դա ինքնին չպետք է հանգեցնի բարենպաստ վարչական ակտի ամբողջությամբ ուժը կորցրած ճանաչելուն, քանի որ նման պարագայում այդ պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված են բավարար չափով նորմեր, և այդ նորմերով սահմանված են համապատասխան կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, որոնց համաձայն գործող օրենսդրությամբ սահմանված որոշակի հարկադրանք կիրառելու միջոցով հնարավոր է հասնել վարչական ակտի հետ կապված օրենքով նախատեսված պարտականության կատարմանը:

Բացի այդ դիմողը գտնում է նաև, որ վերոնշյալ նորմը հստակ չի սահմանում, թե կոնկրետ որ օրենքով նախատեսված և որ պարտականությունը պետք է կատարի այդ ակտի հասցեատերը, ինչի չկատարումը կամ պատշաճ չկատարումն էլ իր հերթին հանգեցնում է տվյալ բարենպաստ վարչական ակտի ուժը կորցնելուն: Նշված դրույթով նախատեսված չէ, թե ինչպես պետք է որոշվի օրենքով նախատեսված տվյալ պարտականությունը կապված է վարչական ակտի հետ, թե ոչ, սահմանված չէ դրանց կոնկրետ ծավալը, ինչպես նաև չկան հստակ պայմաններ թե ինչ ձևով և ինչ կարգով պետք է որոշվեն վնասների չափը և ինչ եղանակով ակտի հասցեատերը պետք է համաձայնության գա վնաս կրող սուբյեկտների հետ. այն դեպքերում, երբ պարտականությունը կապված է վնասների հետ:

Դիմողը՝ վերլուծելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «ե» կետով նախատեսված դրույթը հանգել է հետևության, որ նշված նորմի կիրառման արդյունքում առաջանում է անձի վիճակի վատթարացում, քանի որ եթե բարենպաստ վարչական ակտն ուժը կորցրած է ճանաչվում վարչական կամ այլ մարմնի (դատարանի) որոշմամբ այն դեպքում, երբ դրա ընդունումից հետո տեղի է ունեցել նորմատիվ իրավական ակտի փոփոխություն, ապա վերոգրյալից ուղղակիորեն հետևում է, որ վարչական կամ այլ մարմնին իրավունք է վերապահվել հետադարձ ուժ տալ այն նորմատիվ իրավական ակտերին, որոնք վատթարացնում են անձի իրավական վիճակը, ինչ արդյունքում սահմանափակվում է բարենպաստ վարչական ակտով հասցեատիրոջը տրված հիմնական իրավունքի իրականացումը: Դիմողն իր դիրքորոշումը հիմնավորում է հետևյալ փաստարկով. բարենպաստ վարչական ակտն, մասնավորապես՝ շինարարության թույլտվությունը նրան տրվել էր 2013թ. հունվարի 29-ին, իսկ հետագայում՝ շուրջ մեկ տարի հետո 2014թ. քաղաքաշինության նախարարի կողմից ընդունված հրամանների արդյունքում տեղի է ունեցել նորմատիվ իրավական ակտերի փոփոխություն, որոնցով ակտի հասցեատիրոջ համար սահմանվել է լրացուցիչ պարտավորություն, որպիսին նրա վրա դրված չէր բարենպաստ վարչական ակտով, հետևաբար դա հանգեցրել է Դիմողի իրավական վիճակի վատթարացման:

Դիմողի կարծիքով նշված դրույթը հստակորեն չի սահմանում, թե կոնկրետ ինչ նորմատիվ իրավական ակտերի փոփոխության մասին է խոսքը և որքան պետք է լինի կատարված փոփոխությունների ծավալը, որի արդյունքում բարենպաստ վարչական ակտը կարող է ճանաչվել ուժը կորցրած, կամ վարչական ակտն ուժը կորցրած չճանաչելու դեպքում, որ հանրային շահը կարող է խախտվել, խնդրահարույց է նաև այն հարցը, թե ինչ ծավալով վարչական ակտի հասցեատերը պետք է օգտված լինի այդ ակտով իրեն տրամադրված օգուտներից: Այսինքն՝ բավարար չափով պարզ չէ, թե վարչական ակտի հասցեատերը ինչ ծավալով պետք է օգտվի վարչական ակտով սահմանված իր իրավունքից, որպեսզի դա համարվի հասցեատիրոջ կողմից վարչական ակտով իրեն տրամադրված իրավունքի իրացում կամ չիրացում:

Վերոգրյալից ելնելով՝ Դիմողը գտել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» և «ե» կետերը հակասում են ՀՀ Սահմանադրության 5-րդ, 6-րդ, 8-րդ, 60-րդ, 73-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին:

Նշված գործով ՀՀ սահմանադրական դատարանում նիստը նշանակված է 2019թ. փետրվարի 19-ին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Սույն սահմանադրական վեճի առարկան կազմող խնդրին առնչվող իրավակարգավորումների, մասնավորապես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» և «ե» կետերը սահմանում են.

«3. Բարենպաստ իրավաչափ վարչական ակտը կարող է ուժը կորցնել, եթե՝...

գ) վարչական ակտի հետ կապված է օրենքով նախատեսված որևէ պարտականություն, որը պետք է կատարել այդ ակտի հասցեատերը, սակայն չի կատարել կամ պարտաճ չի կատարել...

ե) նորմատիվ իրավական ակտի փոփոխության հետևանքով վարչական մարմինն իրավունք կունենար չընդունելու տվյալ վարչական ակտը, քանի դեռ այդ վարչական ակտի հասցեատերը չի օգտվել վարչական ակտով տրամադրված օգուտներից, կամ նրա նկատմամբ դեռևս չեն կատարվել այն գործողությունները, որոնք վարչական ակտով երաշխավորված են եղել, և եթե վարչական ակտն ուժը չկորցնելու դեպքում կարող է խախտվել գերակայող հանրային շահը...»:

Նախ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետը, որպես բարենպաստ իրավաչափ վարչական ակտի ուժը կորցնելու հիմք, նախատեսում է վարչական ակտի հետ կապված օրենքով նախատեսված **որևէ պարտականություն** այդ ակտի հասցեատիրոջ կողմից չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:

Նշված իրավակարգավորման սահմանադրականությունն անհրաժեշտ է դիտարկել ՀՀ Սահմանադրությամբ սահմանված իրավական որոշակիության և համաչափության սկզբունքների համատեքստում (ՀՀ Սահմանադրության 78-րդ և 79-րդ հոդվածներ):

Հոդված 78. Համաչափության սկզբունքը

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված

նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Հոդված 79. Որոշակիության սկզբունքը

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 2006 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ ՍԴՈ-649 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ կապված համաչափության սկզբունքի հետ. «...Քննության առարկայի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ հիշյալ նորմերի պահանջները երաշխավորելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ սահմանադրորեն փարբեր իրավունքների սահմանափակման առանձնահատկություններն ու բնույթը: Որքան էլ որ այլոց իրավունքների երաշխավորումն է դառնում անհատի հասարակական վարքագծի կանոնակարգման սահմանը, միևնույն է, Սահմանադրությունը, ինչպես նշվեց, չի նախատեսում որոշակի իրավունքների սահմանափակում: Իսկ այդ իրավունքների ապահովման կարգը չի կարող դրանց իրականացման արգելանք դառնալ, այլ պետք է երաշխավորի այն: Սահմանադրորեն նախատեսված սահմանափակման ենթակա իրավունքների առնչությամբ, համաձայն մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, մարդու իրավունքի սահմանափակումը կարող է իրականացվել միայն օրենքով՝ երաշխավորելով համաչափությունը, չաղավաղելով իրավունքի էությունը (սահմանափակման հետևանքով իրավունքը չզրկվի իր բովանդակությունից, չվտանգվի դրա գոյությունը)...»:

2007թ. փետրվարի 7-ի թիվ ՍԴՈ-677 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշել է. «...Սահմանադրության 43 հոդվածի 1-ին մասում նաև անուղղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար...»:

Հարկ է նկատել նաև, որ համաչափության սկզբունքն իր ամրագրումն է գտել ինքնին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածում, որի համաձայն՝ Վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Վիճարկվող դրույթի բովանդակությունից հետևում է, որ բարենպաստ իրավաչափ վարչական ակտի ուժը կորցնելու հիմք, օրենսդիրը նախատեսել է վարչական ակտի հետ կապված օրենքով նախատեսված **որևէ (ցանկացած) պարտականություն** այդ ակտի հասցեատիրոջ կողմից չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:

Այլ կերպ ասած՝ անկախ վարչական ակտի հասցեատիրոջ կողմից վարչական ակտի հետ կապված օրենքով նախատեսված պարտականության բնույթից, դրա նշանակությունից, այն չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքներից, զուտ այդ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստը կարող է առաջացնել այնպիսի իրավական հետևանք, ինչպիսին բարենպաստ իրավաչափ վարչական ակտն ուժը կորցրած ճանաչելն է:

Օրենսդիրը նման իրավական հետևանք (սահմանափակում) նախատեսելիս որևէ կերպ չի հիմնավորել, թե որքանով է այն ուղղված Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին և այն պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար: Այս առումով, վիճարկվող դրույթը, մեր կարծիքով, չի համապատասխանում Սահմանադրությամբ սահմանված համաչափության սկզբունքին:

Ինչ վերաբերում է, իրավական որոշակիության սկզբունքին, ապա այն հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: ՀՀ սահմանադրական դատարանն իր պրակտիկայում բազմիցս անդրադարձել է **լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի** սկզբունքին:¹

«Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի փարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համարելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է **անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները:** Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:²

ՀՀ Սահմանադրական դատարանն իր 2011 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-997 որոշման մեջ նշել է. «2004թ. դեկտեմբերի 21-ի՝ Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի (*Busuioac v. Moldova*) վճռում, մասնավորապես, Եվրոպական դատարանը գտավ, որ «օրենքով նախատեսված» արտահայտության պահանջներից մեկն այն է, որ համապատասխան միջոցը պետք է լինի կանխատեսելի: Նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի անձին հնարավորություն տա կարգավորելու իր վարքագիծը. անձը պետք է կարողանա տվյալ հանգամանքներում ողջամիտ կերպով կանխատեսել իր տվյալ գործողության հետևանքները: Այդ հետևանքները չեն կարող կանխատեսելի լինել բացարձակ որոշակիությամբ: Թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, դա կարող է հանգեցնել չափազանց

¹ Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 04.05.2010 թիվ ՍԴՈ-881, 09.09.2008 թիվ ՍԴՈ-758 որոշումները:

² ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՈ-1142 որոշումը:

կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շափ օրենքներ **անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շափ անորոշ են և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է:** Միաժամանակ, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ զրպարությունն առնչվող օրենքները՝ պարզի և արժանապարտության իրենց շեշտադրմամբ, **անխուսափելիորեն ներառում են անորոշության որոշակի աստիճան:** Այնուամենայնիվ, դա չի զրկում նրանց իրենց «իրավական բնույթից»՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի նպատակների համար: Ներպետական մարմինների խնդիրն է կիրառել և մեկնաբանել ներպետական օրենքները:

Գնահատողական դատողությունների և փաստերի տարանջատման անհրաժեշտության առնչությամբ Եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առաջադրել է այն պահանջը, որ **հստակ տարբերակում պետք է կատարել փաստական փյալների և գնահատողական դատողությունների միջև:** Այս հանգամանքը հատուկ կարևորվել է նաև Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի կողմից՝ այս հարցի առնչությամբ մի շարք երկրների օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ փորձագիտական եզրակացություններ ներկայացնելիս: Մասնավորապես, քննության առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի նախագիծը՝ հանձնաժողովն իր՝ 2009թ. հունիսի 23-ի CDL-AD(2009)037 միջանկյալ զեկույցում կարծիք է հայտնել, որ հոդվածում օգտագործված «վիրավորանք» և «զրպարություն» եզրույթները հայաստանյան դատարանները պրակտիկայում կիրառելիս պետք է հաշվի առնեն Եվրոպական դատարանի՝ արտահայտվելու ազատությանը վերաբերող նախադեպային իրավունքը, մասնավորապես, դրանում ձևակերպված այն պահանջը, որ պետք է տարբերակում կատարվի գնահատողական դատողությունների և փաստերի միջև»:

Ելնելով վերոշարադրյալ դիրքորոշումներից՝ վիճարկվող իրավակարգավորումը, կարծում ենք, իրավական որոշակիության տեսանկյունից կասկած է հարուցում և չի բխում Սահմանադրության համապատասխան դրույթներից: Մասնավորապես, վիճարկվող իրավակարգավորումից որևէ կերպ հասկանալի և կանխատեսելի չէ, թե իր նկատմամբ կայացված բարենպաստ վարչական ակտի հասցեատիրոջ կողմից իր որ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում է, որ այդ ակտը կարող է ուժը կորցրած ճանաչվել:

Վիճարկվող իրավակարգավորման մեջ վարչական ակտի հետ կապված «*օրենքով նախատեսված*» «*որևէ պարտականություն*» ձևակերպումն այնքան ընդհանրական է ու անհստակ, որ անհնարին է դարձնում անձի համար ընտրելու այնպիսի վարքագիծ, որը կառաջացնի իր համար կանխատեսելի արդյունք. ընդհակառակը՝ նշված ձևակերպումների անստակությունն ու ընդհանրական բնույթը անկանխատեսելի են դարձնում անձի համար որոշակի վարքագիծն ընտրելու իրավական հետևանքները: Այս հիմնավորմամբ կարծում ենք, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետը անհամատեղելի է ՀՀ Սահմանադրությամբ սահմանված իրավական որոշակիության սկզբունքի հետ:

Ինչպես արդեն նշել ենք, վիճարկվող հաջորդ դրույթը՝ «**Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին**» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «ե» կետը սահմանում է.

«3. Բարենպաստ իրավաչափ վարչական ակտը կարող է ուժը կորցնել, եթե՝...

ե) նորմատիվ իրավական ակտի փոփոխության հետևանքով վարչական մարմինն իրավունք կունենար չընդունելու տվյալ վարչական ակտը, քանի դեռ այդ վարչական ակտի հասցեատերը չի օգտվել վարչական ակտով տրամադրված օգուտներից, կամ նրա նկատմամբ դեռևս չեն կատարվել այն գործողությունները, որոնք վարչական ակտով երաշխավորված են եղել, և եթե վարչական ակտն ուժը չկորցնելու դեպքում կարող է խախտվել գերակայող հանրային շահը...»:

Վերևում արդեն իսկ քննարկված համաչափության և իրավական որոշակիության սկզբունքներին անհամապատասխանության վերաբերյալ հինավորումները լիովին վերաբերում են նաև վիճարկվող դրույթին:

Պետք է նաև ավելացնել սակայն, որ քննարկվող իրավակարգավորումը հակասում է նաև ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածին՝ օրենքի հետադարձ ուժի արգելքի վերաբերյալ սկզբունքին, որը վերևում արդեն իսկ քննարկված իրավական որոշակիության սկզբունքի բովանդակության բաղկացուցիչ մասն է:

Հոդված 73. Օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժը

1. Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

2. Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

Համաչափության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքներին հակասելու հետ միաժամանակ վիճարկվող իրավակարգավորումների իրավակիրառական պրակտիկան, կարծում ենք, խնդրահարույց են նաև **սեփականության սահմանադրական իրավունքին** համապատասխանության տեսանկյունից: Ուստի, սույն գործով վեճի առարկա իրավադրույթները քննության առարկա պետք է դարձվեն նաև սեփականության իրավունքի ճանաչման, երաշխավորման և պաշտպանության սահմանադրական մոտեցումների շրջանակներում:

Հոդված 60. Սեփականության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ փրկապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

5. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

...

Սեփականության իրավունքի տարրերը հանդիսացող տիրապետման, օգտագործման, տնօրինման քաղաքացիաիրավական իրավազրույթությունների բովանդակությունը բացահայտված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածում, համաձայն որի՝

Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնածի և այլ ձևերով:

Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Այլ կերպ կարելի է ասել, որ տնօրինման իրավունքը սեփականատիրոջ կողմից գույքի նկատմամբ իրավահարաբերություններ առաջացնելու, փոփոխելու կամ դադարեցնելու հնարավորությունն է:

Սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությանն իր մի շարք որոշումներում անդադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը: Մասնավորապես, իր 18.03.2008թ. թիվ ՍԴՈ-741 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության 8 հոդվածի առաջին մասի համաձայն՝ «*Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը*»: Սահմանադրական այս դրույթի իրացումը երաշխավորվում է ինչպես Սահմանադրության այլ հոդվածներով (31-րդ, 42.1.-րդ, 43-րդ, 44-րդ հոդվածներ, 83.5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետեր, 89-րդ հոդվածի 3-րդ կետ, 105-րդ և 105.1-րդ հոդվածներ), այնպես էլ Հայաստանի Հանրապետության մի շարք այլ իրավական ակտերով, որոնք կարգավորում են սեփականության իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները, սահմանելով սեփականության իրավունքի սուբյեկտներին, սեփականության իրավունքի բովանդակությունը, սեփականության իրավունքի սահմանափակումների թույլատրելի շրջանակները, սեփականության իրավունքն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը, գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող այլ անձանց շահերի պաշտպանության մեխանիզմները:

2008թ. մարտի 18-ի թիվ ՍԴՈ-741 որոշման մեջ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը նաև նշել է. «*Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31-րդ հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք*»:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 2012թ. փետրվարի 24-ի ՍԴՈ-1009 որոշման մեջ արձանագրել է. «*Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ սեփականության իրավունքը ճանաչելով որպես յուրաքանչյուրի հիմնական իրավունք, բացահայտվում է այդ իրավունքի բովանդակությունը, այն է՝ իր սեփականությունը տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կրակելու իրավագործությունները՝ միաժամանակ որպես դրանց իրացման նախապայման սահմանելով **սեփականատիրոջ հայեցողությունը**: Սահմանադրական այս նորմում «իր հայեցողությամբ» ձևակերպման շեշտադրմամբ սեփականության իրավունքի իրացման հիմքում դրվել է սեփականատիրոջ հստակ արտահայտված կամքը, վերջինս դիտարկվում է որպես սեփականության իրավունքի իրացման պարտադիր նախապայման, և սեփականության իրացման գործընթացում վճռորոշ դերակատարություն է հաղորդվում անձի կամաարտահայտությանը: Այս դրույթի բովանդակությունը հանգում է նրան, որ գույքային իրավունքների իրացումը պետք է իրականացվի սեփականության անձեռնմխելիության և պայմանագրային ազատության*

սկզբունքների հիման վրա, որոնք ենթադրում են, ի թիվս այլնի, **քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարություն և գույքային ինքնուրույնություն»:**

«Տնօրինման իրավագործությունը ենթադրում է սեփականափորոջ կողմից օրենքով նախատեսված շրջանակներում ու կարգով գույքի նկատմամբ գործողություններ կատարելու կամ վերջինից ձեռնպահ մնալու միջոցով իր գույքի իրավական և փաստացի ճակատագիրը որոշելու իրավունք: Դա ոչ այլ ինչ է, քան հայեցողություն կամ, այլ կերպ՝ գույքի ճակատագրի հանդեպ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի առաջին մասում նախանշված շրջանակներում և օրենքով սահմանված պայմաններում ու կարգով **ինքնավար կամք դրսևորելու իրավունք:** Սակայն այդ կամքի ինքնավարությունը չի կարող անսահման լինել և չի կարող հակասել օրենքին, խախտել այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը»³:

Ճիշտ է, վիճարկվող իրավակարգավորումն անմիջականորեն չի առնչվում սեփականության սահմանադրական իրավունքին, և դրանով սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող իրավագործություններն ուղղակիորեն չեն սահմանափակվում, այնուամենայնիվ, քննարկվող դատական գործի շրջանակներում վիճարկվող իրավադրույթների ոչ հստակության և համաչափության սկզբունքին չհամապատասխանելու ուժով դատական պրակտիկայում վիճարկվող դրույթի կիրառմամբ խախտվել է նաև անձի սեփականության հիմնական սահմանադրական իրավունքը: Այս իմաստով, քննարկվող նորմի դատական պրակտիկայի համապատասխանությունը սահմանադրությանը, սեփականության սահմանադրական իրավունքի տեսանկյունից, խնդրահարույց է:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» և «ե» կետերի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը խնդրահարույց է:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան

³ ՀՀ սահմանադրական դատարանի 24.02.2012թ. թիվ ՍԴՈ-1009 որոշում: